

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԱՎԱՌԻ

№5 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ



**ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

**2022-2027թթ.**

**ՏՆՕՐԵՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝ ԱՐԱՔՍՅԱ ՌԱՏԻԿԻ ՎԱՐԴԱՆՅԱՆ**

**ԳԱՎԱՌ 2022**

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ.....	4
1.ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ.....	6
2.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ .....	7
3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ.....	8
4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ .....	11
<b>5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ.....</b>	<b>12</b>
Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան.....	12
Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը.....	14
Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը .....	15
Կառավարման և խորհրդակցական մարմինները.....	15
Մանկավարժական համակազմը .....	16
Աշակերտական համակազմը.....	17
Հաղորդակցություն, համագործակցություն .....	17
Ուսումնական միջավայրը .....	18
Կրթության որակը.....	18
Սովորողների շարժը.....	20
Նորագույն տեխնոլոգիաներ և նորարարություններ.....	21
Դաստիարակչական համակարգի կատարելագործում.....	21
Հայրենասիրական դաստիարակություն .....	22
6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ .....	24
7.ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ԿԱՄԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ.....	27

8. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ  
ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ .....38

9. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՉՆԵՐԸ, ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ.....39

## ՆԱԽԱԲԱՆ

Յուրաքանչյուր ոք ունի կրթության իրավունք:  
/ՀՀ Մահմանադրություն, հոդված 39/

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի՝ 2022- 2027 թվականների զարգացման ծրագիրը մշակվել է «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 12-րդ մասի 3-րդ կետի պահանջի համաձայն:

Զարգացման ծրագրի մեթոդաբանական հիմքերն են՝

- 1) Հայաստանի Հանրապետության 2014-2025թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիրը,
- 2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2022թ. ծրագիրը,
- 3) «Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականը զարգացման պետական ծրագիր» ՀՀ օրենքը (նախագիծ):

Մենք այսօր կանգնած ենք արդի կյանքին և մարտահրավերներին համապատասխան կրթական նոր մշակույթ ստեղծելու հրամայականի առջև, ուստի զարգացման ծրագիրը դպրոցի կարևորագույն ռազմավարական փաստաթուղթն է, որով էլ պլանավորվում է դպրոցի աշխատանքը:

Ծրագիրն ուղղված է դեպի ապագան, դեպի նորարարականը, և այն մշակելիս ցուցաբերել էմ հինքնուրույն մոտեցում՝ առաջնորդվելով ներքոնշյալ փոխկապակցված քայլերի հաջորդականությամբ:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հենքը, ըստ «Հանրակրթության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի, ազգային դպրոցն է, որի գլխավոր

նպատակը համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված և մասնագիտական կողմնորոշում ունեցող անձի ձևավորումն է:

Կրթությունն անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և սերունդներին փոխանցելուն: Կայուն զարգացման բոլոր նպատակադրումներում իրապես կարևորվում է կրթության դերը, որն իր բովանդակությամբ ու ձևերով պետք է համապատասխանի քաղաքական, տնտեսական, սոցիալական և էկոլոգիական բազմաթիվ խնդիրների առաջ կանգնած երկրի կայուն զարգացող և բարեկեցիկ հասարակության կայացմանը:

## 1.ԴՊՐՈՑԻ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

**Առաքելությունը կազմակերպության ցանկալի ապագայի մտապատկերն է:**

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի առաքելությունը հանրակրթության առաջին և երկրորդ աստիճաններում սովորողների համար մատչելի, բարձրորակ, արդյունավետ և արդիական կրթության, նրանց մտավոր, հոգևոր, ֆիզիկական և սոցիալական զարգացման, նրանց անձի՝ որպես քաղաքացու ձևավորման, ինքնուրույն կյանքի, մասնագիտական կողմնորոշման համար անհրաժեշտ կոմպետենցիաների ձեռքբերման համար բարենպաստ կրթական միջավայրի ապահովումն է:

2. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ



Գեղարքունիքի մարզ



Քաղաք Գավառ



0(264) 2-71-03



[gavar5@schools.am](mailto:gavar5@schools.am)



[araksyavard@gmail.com](mailto:araksyavard@gmail.com)

### 3. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1985 թվականին Հայկական ՍՍՀ Կամո քաղաքում հիմնադրվեց թիվ 9 միջնակարգ դպրոցը՝ քարաշեն չորս մասնաշենքով:

ՀՀ կառավարության՝ 2002թ. մարտի 11-ի N231 և հուլիսի 25-ի N1392-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու մասին N958-Ն որոշման համաձայն՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետի 2009թ. օգոստոսի 15-ի N 161-Ա որոշմամբ «ՀՀ Գավառ քաղաքի թիվ 9 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ը վերանվանվել է «Հայաստանի Հանրապետության Գավառի N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ, որը համարվում է «ՀՀ Գավառ քաղաքի թիվ 9 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի իրավահաջորդը:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 01.07.2010թ. N657-Ա/Ք հրամանով դպրոցին տրվել է տարրական ընդհանուր՝ 1-ին աստիճան, կրթական գործունեության լիցենզիա՝ կրթություն իրականացնելու 124 սովորողի համար:

ՀՀ կրթության և գիտության նախարարի 01.07.20010թ. N658-Ա/Ք հրամանով դպրոցին տրվել է հիմնական ընդհանուր՝ 2-րդ աստիճան, կրթական ծրագրով գործունեության լիցենզիա՝ կրթություն իրականացնելու 170 սովորողի համար:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 28.12.2020թ. N1834-Ա/2 հրամանով դպրոցին տրվել է նախադպրոցական կրթական ծրագրով գործունեության լիցենզիա 30 սանի համար:

Նախակրթարան՝  
30 սահմանային տեղ

Տարրական ընդհանուր՝  
124 սահմանային տեղ

Հիմնական ընդհանուր՝  
170 սահմանային տեղ

2021-2022 ուստարում դպրոցում կոմպլեկտավորվել է 10 դասարան՝  
սանով:

263 աշակերտով, և նախակրթարանի 1 խումբ՝ 19



h/h	Դասարան	Աշակերտների թիվը
1	I	29
2	II	26
3	III	26
4	IV	29
5	V	24
6	VI <sup>u</sup>	27
7	VI <sup>բ</sup>	18
8	VII	32
9	VIII	29
10	IX	23
11	նախակրթ.	19
Ընդամենը		282 աշակերտ

Դպրոցը հիմնավերանորոգված չէ, բայց կատարվել են մասնակի վերանորոգման աշխատանքներ տարբեր ժամանակահատվածներում (2017-2022 ուսումնական տարիների ընթացքում):

Կատարվել է՝

- 4 սանհանգույցի հիմնանորոգում,
- 1-ին, 2-րդ և 3-րդ հարկերի կոսմետիկ վերանորոգում,
- 6 դասասենյակի /փոքր մարզադահլիճ, հանգստի սենյակ, շախմատի կաբինետ, աղջիկների տեխնոլոգիայի կաբինետ, հանդիսությունների փոքր դահլիճ/ վերանորոգում,
- Դպրոցի մուտքի և մուտքի տանիքի հիմնանորոգում,
- Փոխվել են դպրոցի ճակատային մասի պատուհանները,
- Ճաշարանի և ճաշարանին կից պահեստի և երկու սանհանգույցների վերանորոգում,
- «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի կաբինետի վերանորոգում և գույքի համալրում,
- Մասնագիտական կողմնորոշման ակումբի կաբինետի վերանորոգում և գույքի համալրում,
- Բացվել է նախակրթարան /2 դասասենյակ, մուտք, հանդերձարան, սանհանգույց/,
- Դպրոցի մուտքին կից կառուցվել է թեք հարթակ ԿԱՊԿՈւ երեխաների համար:

Դպրոցի շենքի վերանորոգման և տեխնիկական հագեցվածության խնդիրների լուծման տեմպերը կախված են պետության կողմից դպրոցի ֆինանսավորման մեխանիզմից: Ներկայիս աշակերտ թվով ֆինանսավորումը չփոփոխելու դեպքում մեր միակ հույսը մնում է արդյունավետ աշխատանքի շնորհիվ բարձրացնել դպրոցի հեղինակությունը՝ ավելացնելով աշակերտների թիվը և դրանից կախված համապատասխան ֆինանսավորումը կամ ներգրավելով բարերաներին:

Դպրոցն ունի 42 աշխատակից, որից՝

- ✚ Կարչական անձնակազմ - 2
- ✚ Մանկավարժական հաստիքային անձնակազմ- 8
- ✚ Ուսուցչական անձնակազմ- 20
- ✚ Ուսումնաօժանդակ և սպասարկող անձնակազմ -12

Դպրոցում աշխատում են թվով 20 ուսուցիչներ, որոնցից 19-ը ունեն բարձրագույն կրթություն, 1-ը՝ միջին մասնագիտական: Անձնակազմի միջին տարիքը 35-55 է: Ուսուցիչների միջին ծանրաբեռնվածությունը՝ 1 դրույքով ապահովված է երկու ուսուցիչ, մյուսների ծանրաբեռնվածությունը մոտավորապես 0,75 դրույք է:

Դպրոցն աշխատում է 5-օրյա աշխատանքային ռեժիմով, միահերթ:

#### 4. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԱԴՐՄԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԸ

Ուսումնական հաստատության գործունեության վերլուծությունը կատարել և այդ վերլուծության հիման վրա սահմանել եմ նպատակներ՝ ըստ հետևյալ ոլորտների.

- Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան
- Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը
- Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը
- Կառավարման և խորհրդակցական մարմինները
- Աշակերտական համակազմը
- Մանկավարժական համակազմը
- Համագործակցությունը համայնքի, կրթության կառավարման մարմինների և շահառու կազմակերպությունների հետ
- Ուսումնական միջավայրը
- Կրթության որակը
- Նորագույն տեխնոլոգիաները և նորարարությունները
- Դպրոցի դաստիարակչական համակարգի կատարելագործումը
- Հայրենասիրական դաստիարակություն

## 5. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի N5 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի զարգացման ծրագրում իրատեսական նպատակներ և խնդիրներ սահմանելու համար կատարել եմ իրավիճակի ՈՒԹՀԽ (SWOT) վերլուծություն.

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
<b>Դպրոցի շենքային պայմանները և նյութատեխնիկական բազան</b>	
<ul style="list-style-type: none"> <li>• 4 սանհանգույցի հիմնանորոգում</li> <li>• 1-ին, 2-րդ և 3-րդ հարկերի կոսմետիկ վերանորոգում</li> <li>• 6 դասասենյակի /փոքր մարզադահլիճ, հանգստի սենյակ, շախմատի կաբինետ, աղջիկների տեխնոլոգիայի կաբինետ, հանդիսությունների փոքր դահլիճ/ վերանորոգում</li> <li>• Դպրոցի մուտքի և մուտքի տանիքի հիմնանորոգում</li> <li>• Փոխվել են դպրոցի ճակատային մասի պատուհանները</li> <li>• Ճաշարանի և ճաշարանին կից պահեստի և երկու սանհանգույցների վերանորոգում</li> <li>• «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի կաբինետի</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Հաստատության տարածքը ցանկապատված և անվտանգ չէ սովորողների ազատ տեղաշարժման համար</li> <li>• Ուսումնական հաստատության շենքը հարմարեցված չէ ԿԱՊԿՈՒ սովորողներին անվտանգ տեղաշարժ և ուսուցում ապահովող պայմաններին թեք հարթակներ և այլն.</li> <li>• Ուսումնական հաստատության դասարանները, համակարգչային կաբինետը նորագույն</li> </ul>

<p>վերանորոգում և գույքի համալրում</p> <ul style="list-style-type: none"> <li>• Մասնագիտական կողմնորոշման ակումբի կաբինետի վերանորոգում և գույքի համալրում</li> <li>• Բացվել է նախակրթարան /2 դասասենյակ, մուտք, հանդերձարան, սանհանգույց/:</li> <li>• Առկա է շուրջօրյա հոսող խմելու ջուր</li> <li>• Հաստատությունն ապահովված է լոկալ ջեռուցման համակարգով</li> <li>• դասասենյակներում և միջանցքներում առկա են ջեռուցումն ապահովող մարտկոցներ</li> <li>• Առկա է բուժկետ, որտեղ կարող է տրամադրվել 1-ին բուժօգնություն</li> <li>• Համավարակի պայմաններում դպրոցը սովորողներին և աշխատակիցներին ապահովում է դիմակներով ու ախտահանող միջոցներով</li> <li>• Տարրական դասարանների աշակերտների և նախակրթարանի սաների համար գործում է ճաշարան՝ տաք սննդով</li> </ul>	<p>տեխնոլոգիաներով հագեցած չեն</p> <ul style="list-style-type: none"> <li>• Դասասենյակների, լաբորատորիաների, ուսուցչանոցի, տնօրենի կաբինետի գույքը հնամաշ է</li> <li>• Ֆիզիկայի և քիմիայի լաբորատորիաները հագեցած չեն անհրաժեշտ սարքավորումներով ու նյութերով</li> <li>• Հիմնովին վերանորոգման կարիք ունեն մարզադահլիճը և հանդիսությունների դահլիճը</li> <li>• Արդի ժամանակաշրջանի պահանջների և ուսումնական յուրօրինակ բազայի անհամապատասխանություն</li> </ul>
---	--

## Դպրոցի ֆինանսատնտեսական գործունեությունը

- Պետական բյուջեից ստացվող ֆինանսական միջոցների կայուն մուտքերը:

- Բյուջեի նպատակային օգտագործում, որը հնարավորություն է տալիս կատարել բոլոր անհրաժեշտ ծախսերը:

- Կատարված ծախսերի թափանցիկության ապահովում:

- Վերջին երեք տարիներին սովորողների թվի աստիճանական աճով պայմանավորված՝ բյուջեից ֆինանսավորման աճը:

- Համայնքում գործող իրավաբանական անձից երաշխավորված դրամական հատկացումների բացակայությունը:

- Համայնքի կողմից դրամական օժանդակության բացակայություն:

Դպրոցի գործունեությունը կանոնակարգող իրավական ակտերը

- Դպրոցում առկա են պարտադիր գործածության երաշխավորված փաստաթղթերը, և դրանք վարվում են ՀՀ ԿԳ նախարարի 18.01.2011թ. N23-Ն հրամանի պահանջներին համապատասխան:

- Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթի առկայությունը:

Կառավարման և խորհրդակցական մարմինները

- Դպրոցում գործում են կանոնադրության համաձայն ձևավորված կոլեգիալ կառավարման մարմինը՝ խորհուրդը, և խորհրդակցական մարմինները՝ մեթոդական միավորումներ, մանկավարժական խորհուրդ, ծնողական խորհուրդ, աշակերտական խորհուրդ, որոնք կանոնավոր գումարում են նիստեր և կազմակերպում աշխատանքները:

Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ, շրջանավարտների խորհուրդ:

## Մանկավարժական համակազմը

- |   |   |
|---|---|
| <ul style="list-style-type: none"><li>• Ուսուցիչներն ունեն անհրաժեշտ պատրաստվածություն, մասնագիտական զարգացման անհրաժեշտ կարողություններ:</li><li>• Որակավորման տարակարգ ունեցող ուսուցիչների առկայությունը (7 ուսուցիչ):</li><li>• Կամավոր ատեստավորված ուսուցիչների առկայությունը (1 ուսուցիչ):</li><li>• Ուսուցիչները համագործակցում են միմյանց հետ:</li><li>• Դպրոցն ուսումնադաստիարակչական հարցերում ապահովում է աշակերտակենտրոն մոտեցում:</li></ul> | <ul style="list-style-type: none"><li>• Դպրոցը նոր նախաձեռնություններն իրականացնում է աշխատակազմի բացառապես կամավոր անվճար, թեպետև ծանր, աշխատանքի շնորհիվ:</li><li>• Ուսուցիչների հոգեբանամանկավարժական և մեթոդական կարողությունների շարունակական վերապատրաստումներ:</li></ul> |
|---|---|



Աշակերտական համակազմը	
<ul style="list-style-type: none"> <li>• Սովորողները արտադասարանական միջոցառումներին ակտիվ մասնակցություն են ցուցաբերում:</li> <li>• Արտադպրոցական տարբեր խմբակներում ունեն մեծ ներգրավվածություն:</li> <li>• Ունեն նոր մեթոդներով և տեխնոլոգիաներով աշխատելու մեծ պատրաստակամություն:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Սովորողների կարողունակությունների լիարժեք զարգացման սահմանափակ հնարավորությունները համավարակի պայմաններում:</li> <li>• Հոգեբանական աջակցության ծառայությունների բացակայություն:</li> </ul>
Հաղորդակցություն, համագործակցություն	
<ul style="list-style-type: none"> <li>• Դասավանդման ընթացքում հմուտ ուսուցիչները սովորողների միջև ստեղծում են փոխհամագործակցության կապեր:</li> <li>• Դպրոցի բոլոր խորհրդակցական մարմինները (խորհուրդները) համագործակցում են միմյանց հետ:</li> <li>• Դպրոցը համագործակցում է ԿԳՄՄՆ-ի, ԳԹԿ-ի, ԿՏԱԿ-ի, ավագ դպրոցների, ԳՊՀ-ի, քոլեջների, ԱԻՆ-ի, ոստիկանության, և այլ կառույցների հետ:</li> <li>• Համագործակցում է «Վորլդ Վիժն» և «Հայկական Կարիտաս» ՀԿ-ների հետ:</li> <li>• Ամուր է դպրոց-ընտանիք- համայնք կապը:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Համագործակցություն միջազգային կազմակերպությունների հետ:</li> </ul>

## Ուսումնական միջավայրը

- |  |   |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> <li>• Դպրոցն ապահովված է դասագրքերով և ուսումնական այլ գրականությամբ:</li> <li>• Դպրոցն ունի Մասնագիտական կողմնորոշման ակումբ և «Արմաթ» ինժեներական լաբորատորիա:</li> <li>• Դպրոցում պաշտպանված են երեխաների իրավունքները:</li> <li>• Դպրոցում ձևավորված է սովորեցնելու և սովորելու մշակույթը:</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>• Գրադարանի տարածքը փոքր է ժամանակակից տեխնիկայով և տեխնոլոգիաներով հագեցած ընթերցասրահ ձևավորելու համար:</li> <li>• Դպրոցը չունի քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության հագեցած և ակտիվ գործող լաբորատորիաներ:</li> <li>• Բացակայում են հեռավար ուսուցման կազմակերպման լիարժեք պայմաններ:</li> <li>• Դասասենյակներում բացակայում են ինտերնետ կապը և S2S սարքավորումները:</li> </ul> |
|--|---|

## Կրթության որակը

- |  |   |
|--|---|
| <ul style="list-style-type: none"> <li>• Բոլոր երեխաների համար ստեղծված են հավասար պայմաններ ուսումնական հաստատությունում սովորելու համար՝ անկախ կարողություններից և սոցիալական վիճակից:</li> <li>• Դպրոցն ապահովում է բոլոր սովորողների համար հավասար մասնակցություն ուսումնառության գործընթացում:</li> <li>• Կրթության բարձր որակ ավահովելու համար կիրառվում են ուսուցման նորարարական համագործակցային</li> </ul> | <ul style="list-style-type: none"> <li>• Կրթական գործընթացի որակը կրթական աստիճաններում:</li> </ul> |
|--|---|

<p>մեթոդներ և տեխնոլոգիաներ, առկա է ուսուցիչների ջանքերով ստեղծված դիդակտիկ նյութերի մեծ բազա:</p> <ul style="list-style-type: none"> <li>• Ուսումնական գործընթացի կազմակերպման եղանակը և միջոցները ապահովում են սովորողների կարողունակությունների զարգացումը:</li> </ul>	
---	--

Կրթության որակը

<i>Դպրոցի 2017-2021 թթ առաջադիմության և որակի վերլուծություն</i>	
<p><b>2017-2018 ուստարի</b></p> <p>առաջադիմություն՝ 100% որակ՝ 54%</p>	<p><b>Դինամիկա՝ /նախորդ ուստարի/</b></p> <p>առաջադիմություն՝ 0% որակ՝ +7.7 %</p>
<p><b>2018-2019 ուստարի</b></p> <p>առաջադիմություն՝ 100% որակ՝ 48%</p>	<p><b>Դինամիկա՝ /նախորդ ուստարի/</b></p> <p>առաջադիմություն՝ 0% որակ՝ -6 %</p>
<p><b>2019-2020 ուստարի</b></p> <p>առաջադիմություն՝ 94,14% որակ՝ 54,5%</p>	<p><b>Դինամիկա՝ /նախորդ ուստարի/</b></p> <p>առաջադիմություն՝ -5,86% որակ՝ +6,5%</p>
<p><b>2020-2021 ուստարի</b></p> <p>առաջադիմություն՝ 100% որակ՝ 48%</p>	<p><b>Դինամիկա՝ /նախորդ ուստարի/</b></p> <p>առաջադիմություն՝ +5,56% որակ՝ -6,5%</p>

Սովորողների շարժը

<b>Դպրոցի սովորողների շարժը 2017-2021 թթ /տարեսկիզբ/</b>		
<b>Ուստարի</b>	<b>Աշակերտներ</b>	<b>Դինամիկա՝ /նախորդ ուստարի/</b>
<b>2017-2018 ուստարի</b>	258	
<b>2018-2019 ուստարի</b>	254	-4
<b>2019-2020 ուստարի</b>	240	-14
<b>2020-2021 ուստարի</b>	253	+13
<b>2021-2022 ուստարի</b>	263	+10
<b>Նախակրթարան</b>	19	+29

Նորագույն տեխնոլոգիաներ և նորարարություններ

- Ուսուցիչ-ուսուցիչ, ուսուցիչ-սովորող, սովորող-սովորող համագործակցության վրա հիմնված մանկավարժական նորարարական մեթոդների կիրառում:
- Ուսուցման այլ տեխնոլոգիաների տիրապետում վերապատրաստումների միջոցով և նորարարությունների կիրառում:
- «Էկո» ծրագրի իրականացում
  - թուղթը աղբ չէ
  - պլաստիկը աղբ չէ
  - վտանգավոր թափոնների կառավարման վերաբերյալ իրազեկության բարձրացման կրթական, մշակութային և ստեղծագործական գործողությունների ծրագիր
- Մասնագիտական կողմնորոշման ակումբի ստեղծում:
- «Արմաթ» ինժեներական լաբորատորիայի ստեղծում:

- Դպրոցում աշխատանքի անցած նոր ուսուցիչների՝ նշված տեխնոլոգիաներին չտիրապետելու կամ մասամբ տիրապետելու հանգամանքը:

Դաստիարակչական համակարգի կատարելագործում

- Դաստիարակչական գործընթացում առաջնորդվում ենք միասնական սկզբունքներով և կանոններով, միասնական մանկավարժական պահանջներով:

- Մոցիալական անապահով ընտանիքների երեխաների ոչ լիարժեք դաստիարակություն:
- Արդի տեղեկատվական տեխնոլոգիաների ոչ ճիշտ օգտագործում:

<ul style="list-style-type: none"> <li>• Ծնողներն ակտիվորեն ընդգրկված են դպրոցի դաստիարակչական գործընթացում:</li> <li>• Դաստիարակչական աշխատանքները հիմնված են հստակ նախագծված դասղեկական պլանների վրա:</li> <li>• Բացահայտվում են առկա խնդիրները և բացթողումները:</li> <li>• Ձեռնարկվում են քայլեր աշակերտ-ուսուցիչ համագործակցության, հաղորդակցության դրական միջավայր ստեղծելու ուղղությամբ:</li> <li>• ԱԲՄԱԴ ծրագրի իրականացում:</li> </ul>	
--	--

**Հայրենասիրական դաստիարակություն  
Հայրենապաշտական դաստիարակություն- ահա՛ մեր փրկության խարիսխը: Գ. Նժդեհ**


<ul style="list-style-type: none"> <li>• Համակարգվում, վերլուծվում և գնահատվում են ծրագրված հայրենասիրական միջոցառումները:</li> <li>• Դպրոցական հիմնական բոլոր միջոցառումներն իրականացնելիս ապահովվում են հայկական խորհրդանիշների և հայրենասիրական գաղափարների գործածումը:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Հաճախակի անցկացնել ռազմահայրենասիրական բնույթի մրցույթներ, կլոր սեղաններ, ինտելեկտուալ խաղեր:</li> <li>• Կազմակերպել հանդիպումներ հայտնի մարդկանց, զինվորների, ազատամարտիկների, պատերազմի հաշմանդամների հետ:</li> </ul>
---	--

Հնարավորություններ	Խոչընդոտներ (վտանգներ)
<ul style="list-style-type: none"> <li>• Ուսուցչական համակազմի գերակշռող մասի պատրաստակամությունը</li> <li>• Շենքային բավարար պայմանները</li> <li>• Ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու հնարավորությունը</li> <li>• Դպրոցի պետական ֆինանսավորման ծավալների հետևողական ավելացում</li> <li>• Շահույթի ազատ մնացորդի առկայություն</li>   <li>• Ֆինանսական գործընկերներ (հովանավորներ) ձեռք բերելու Հավանականությունը:</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Հասարակության մեջ սոցիալական անառողջ գործընթացներ</li> <li>• Երկրի սոցիալ-տնտեսական վիճակը</li> <li>• Համավարակը</li> <li>• Պատերազմը</li> <li>• Արտագաղթը</li> <li>• Աշակերտների թվի նվազում</li> </ul>

## 6. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դպրոցի զարգացման ծրագիրն ուղղված է առաջիկա հինգ տարում դպրոցի բնականոն և արդյունավետ գործունեության ապահովմանը, դպրոցում կրթության որակի, գիտելիքի վարկանիշի բարձրացմանը, կրթական ծրագրերի իրականացմանը, դպրոցի առջև ծառայած հիմնախնդիրների աստիճանական լուծմանը, ժամանակակից մարտահրավերներին արձագանքելուն, կրթօջախի առաջընթացին՝ առաջնորդվելով հանրակրթության վերաբերյալ ՀՀ օրենսդրության, ենթաօրենսդրական ակտերի, ՀՀ կառավարության որոշումների պահանջներով:

Ծրագրի նպատակը և ակնկալվող արդյունքները շարադրվել են՝ հիմնվելով մի քանի էլակետային դրույթների վրա:





Ելնելով նշված դրույթներից, ինչպես նաև սովորողներին արդյունավետ ու արդիական կրթություն տալու անհրաժեշտությունից՝ պետք է՝

1. ստեղծել նպաստավոր պայմաններ սովորողների առողջության պահպանման, անվտանգ կենսագործունեության համար
2. սովորողների և մանկավարժների արդյունավետ գործունեության համար ստեղծել բարենպաստ պայմաններ
3. ստեղծել դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթ
4. արդյունավետ օգտագործել ֆինանսները
5. ձեռնարկել միջոցառումներ համագործակցելու տեղական և միջազգային կազմակերպությունների հետ կրթական գործընթացում նոր հաջողություններ արձանագրելու ուղղությամբ,
6. դպրոցն ապահովել որակական բարձր հատկանիշներով օժտված կադրերով. համատեղ աշխատանքով աջակցել ուսուցիչների որակավորման տարակարգերի շնորհման գործընթացին
7. նպաստել սովորողների իրավական գիտակցության ձևավորմանը և զարգացմանը
8. ստեղծել նպաստավոր պայմաններ կոմպետենտ քաղաքացիների ձևավորման և զարգացման համար
9. սովորողների մոտ ձևավորել կրթության և ողջ կյանքի ընթացքում սովորելու նկատմամբ դրական վերաբերմունք
10. ստեղծել համապատասխան պայմաններ, որպեսզի յուրաքանչյուր սովորող, այդ թվում նաև

կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող, կարողանա օգտվել իր՝ հատուկ մանկավարժական, առողջապահական, հոգեբանական, սոցիալական և այլ ծառայությունների դիմելու իրավունքից

11. դպրոցի կառավարման համակարգը, ինչպես նաև ծնողների, ուսուցչական անձնակազմի ու սովորողների հարաբերությունները հանրության համար դարձնել առավել թափանցիկ
12. դպրոցի կառավարման գործում ակտիվորեն ներգրավել դպրոցի խորհրդակցական մարմիններին, հատկապես ծնողական և աշակերտական խորհուրդներին
13. նպատակաուղղված աջակցել դպրոց-ընտանիք կապի ամրապնդմանն ու համագործակցությանը:

**7. ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ,  
ԿԱՏԱՐՈՂՆԵՐԸ, ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑԸ, ՀՆԱՐԱՎՈՐ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԾԱԽՍԵՐԸ**

N° / №	Գործողություններ	Կատարողները	Ժամանակացույցը	Հնարավոր ֆինանսական ծախսերը
1	2	3	4	5
1.	Դպրոց տանող ճանապարհի ասֆալտապատում	Համայնքապետարան	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	Պետական բյուջե և համայնքապետարան
2.	1-ին հարկի պատուհանների փոխում /13 հատ/	Տնօրինություն, տեխնիկական անձնակազմ, մրցույթում տեղերը շահած կազմակերպություն	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	Պետական բյուջեի, դպրոցի տնտեսված բյուջեի միջոցներով
3.	Աշակերտների համար անձնական պահարանների տեղադրում	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	Պետական բյուջեի, դպրոցի տնտեսված բյուջեի միջոցներով
4.	Սպորտդահլիճի հիմնանորոգում /288մ²/. <ul style="list-style-type: none"> <li>• Նոր պատուհաններ</li> <li>• Նոր դուռ</li> <li>• Պատերի, առաստաղի, հատակի հիմնանորոգում</li> <li>• Հանդերձարանի վերանորոգում</li> </ul>	Տնօրինություն, տեխնիկական անձնակազմ, մրցույթում տեղերը շահած կազմակերպություն	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	Պետական բյուջեի, դպրոցի տնտեսված բյուջեի միջոցներով

5.	SZS կաբինետի՝ սարքավորումներով համալրում	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	Դպրոցի տնտեսված բյուջեի միջոցներով
6.	Ֆիզիկայի, քիմիայի լաբորատորիաների նյութերով համալրում	Տնօրինություն, հասարակական կազմակերպություններ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	Դպրոցի տնտեսված բյուջեի միջոցներով, ՀԿ-ների տրամադրած միջոցներով
7.	<input type="checkbox"/> Ազգային երգ ու պար <input type="checkbox"/> խմբակի ստեղծում	Տնօրենություն	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	Դպրոցի բյուջեի միջոցներով
8.	Դպրոցի տարածքի ցանկապատում	Մարզպետարան, համայնքապետարանի համապատասխան բաժին, տնօրինություն	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	Պետական բյուջե
9.	Դպրոցում սանիտարահիգիենիկ անհրաժեշտ պայմանների ապահովում(հակահրդեհային, անվտանգ սննդի, լուսային, ջերմային)	Տնօրենություն, համայնքի համապատասխան բաժինների աշխատակիցներ, ուսուցիչներ, ծնողներ, սովորողներ, զինղեկ, բուժքույր, դպրոցի տեխնիկական անձնակազմ:	Ծրագրի իրականացման ընթացքում՝ ըստ առաջնահերթությունների և ֆինանսների բաշխման հնարավորությունների: /2022-2027թթ/	Դպրոցի տնտեսված բյուջեի միջոցներով

10.	Ուսումնական հաստատությունը պարբերաբար իրականացնում է մասնակի վերանորոգման, բարեկարգման աշխատանքներ	Տնօրեն, տեխնիկական անձնակազմ, ծնողներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	Դպրոցի տնտեսված բյուջեի միջոցներով
11.	Դպրոցի սպորտային բազայի անընդհատ հարստացում, թարմացում	Տնօրեն, ՀԿ-ներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	Դպրոցի տնտեսված բյուջեի միջոցներով
12.	Բարեգործ-բարերարների, հովանավորների ներգրավման աշխատանքներ	Տնօրեն	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	
13.	Սովորողների կարողունակությունների ձևավորում՝ պետական կրթական չափորոշիչներին համապատասխան:	Տնօրենություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	
14.	Սովորողների մոտ ուսման նկատմամբ մոտիվացիայի խթանման միջոցառումներ	Տնօրենություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-
15.	Սովորողների մոտ առողջ ապրելակերպի մշակույթ ձևավորելուն ուղղված միջոցառումներ	Տնօրենություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	

16.	Ուսուցման կազմակերպում՝ ազգային գաղափարախոսության հենքի վրա: Սովորողի դաստիարակություն՝ ազգա-յին բարոյական նորմերով:	Տնօրենություն, մանախազահներ, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-
17.	Հաճախակի կազմակերպել կանխարգելիչ միջոցառումներ՝ Ուղղված երեխաների դժբախտ պատահարներից պաշտպանվելու կարողությունների ձևավորմանը	Տնօրեն, ԴԱԿ, դասղեկներ, ՆԶՊ ուսուցիչ, ոստիկանության համապատասխան բաժնի աշխատակիցներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-
18.	Միջոցառումների, զեկուցումների, քննարկումների միջոցով պարբերաբար անդրադառնալ դարին բնորոշ խնդրահարույց հիվանդություններին (ՁԻԱՀ, ակոհոլիզմ, թմրամոլություն, սեռավարակներ, թրաֆիքինգ) և դրանց վտանգավորությանը	Տնօրեն, ԴԱԿ, դասղեկներ, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-

19.	Դպրոցում կրթական գործընթացի մասնակիցների, նրանց գործունեության դերի և որակի բարձրացմանն ուղղված միջոցառումներ	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-
20.	Կառավարման խորհրդի դերի բարձրացում՝ ներգրավելով նրան աշխատանքների կազմակերպման և վերահսկողական գործընթացում	Տնօրինություն	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-
21.	Օժտված և շնորհալի սովորողների բացահայտմանը, նրանց կարողությունների մակարդակով կրթության գործի կազմակերպմանը ուղղված աշխատանքներ	Տնօրենություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-

22.	Դպրոցի գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի էլեկտրոնային փաթեթի ստեղծում	Տնօրենություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման առաջին տարում /2022-2027թթ/	-
23.	Խորհրդակցական մարմինների իրավագիտակության բարձրացմանը ուղղված սեմինարների շարք	Տնօրեն, կառավարման խորհրդի նախագահ, խորհրդակցական մարմինների նախագահներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-
24.	Ապահովել ծնողներին տեղեկատվությամբ, կազմակերպել խորհրդատվություններ, անհատական հանդիպումներ	Տնօրենություն	Ծրագրի իրականացման ընթացքում` /2022-2027թթ/ պարբերաբար	
25.	Ծնողների ակտիվ ներգրավվածության կազմակերպում	Տնօրենություն	Ծրագրի իրականացման ընթացքում` /2022-2027թթ/ պարբերաբար	
26.	Ծնողների համար կազմակերպել միջոցառումներ, կինոդիտումներ	Տնօրեն, ԴԱԿ, դասուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում` /2022-2027թթ/ պարբերաբար	



27.	Ուսումնասիրել, ընդհանրացնել մանկավարժական առաջավոր փորձը և ներդնել պրակտիկ աշխատանքում	Տնօրենություն, մմ նախագահներ, ուսուցիչներ,	Ծրագրի իրականացման ընթացքում` /2022-2027թթ/ պարբերաբար	
28.	Ուսուցիչների մեջ ձևավորել սովորողների կարողությունների և հմտությունների ձեռքբերման և իրավական գիտակցությունը ուսուցման գործընթացում բարձրացնելու հմտություններ	Տնօրենություն, մմ նախագահներ, ուսուցիչներ,	Ծրագրի իրականացման ընթացքում` /2022-2027թթ/ պարբերաբար	-
29.	Սկսնակ ուսուցիչներին նախապատրաստել ատեստավորման	Տնօրենություն, մմ նախագահներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	Դպրոցի բյուջեի միջոցներով
30.	Որակավորման տարակարգ չունեցող ուսուցիչների համար ստեղծել պայմաններ որակավորման տարակարգի առաջին աստիճանին հասնելու համար	Տնօրենություն, մմ նախագահներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-
31.	Կազմակերպել մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ. վերապատրաստումների միջոցով զարգացնել ներառական կրթություն իրականացնող ուսուցիչների դասավանդման հմտությունները	Տնօրենություն, մմ նախագահներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	Դպրոցի բյուջեի միջոցներով

32.	Ուսուցիչներին հաղորդակից դարձնել մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպել սեմինարներ, մանկավարժական մեթոդական ընթերցումներ	Տնօրենություն, մմ նախագահներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-
33.	Ընդլայնել տեղեկատվական և հեռահաղորդակցման տեխնոլոգիաների ներդրման գործընթացը, հասնել այն բանին, որ յուրաքանչյուր ուսուցիչ տիրապետի համակարգչային ծրագրերին և կարողանա օգտվել համացանցից, այդ նպատակով կազմակերպել դասընթացներ	Տնօրենություն, մմ նախագահներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	Դպրոցի բյուջեի միջոցներով
34.	Աջակցել մանկավարժներին իրենց մեթոդական աշխատանքների արդյունքներին վերաբերող նյութերը մշակելու և տպագրելու գործում, ստեղծել համապատասխան պայմաններ փորձարարական հետազոտական աշխատանքներ իրականացնելու համար, նպաստել ուսուցիչների ինքնակրթմանը և ինքնազարգացմանը	Տնօրենություն, մմ նախագահներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-

35.	Ուսուցիչների կողմից սովորողների խրախուսման և ակտիվացման մեթոդների կիրառում	Տնօրենություն, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	
36.	Փոխադարձ դասալսումների ակտիվացում	Տնօրենություն, մմ նախագահներ, ուսուցիչներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	
37.	Բարոյահոգեբանական մթնոլորտի ապահովում, միջավայրի ֆիզիկական խոչընդոտների վերացում, հավասար հնարավորությունների ստեղծում	Տնօրեն, ԴԱԿ, դասուղեկներ	Ծրագրի իրականացման ընթացքում` /2022- 2027թթ/պարբերաբար	
38.	Սոցիալապես անապահով ընտանիքների սովորողների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրականացում	Տնօրեն, ԴԱԿ, դասուղեկներ, ՀԿ	Ծրագրի իրականացման ընթացքում` /2022- 2027թթ/պարբերաբար	
39.	Ապահովել, որ դաստիարակչական աշխատանքները հիմնվեն հստակ նախագծված դասուղեկական պլանների վրա՝ բացահայտելով առկա խնդիրները և բացթողումները, ձեռնարկել անհրաժեշտ միջոցառումներ	Տնօրեն, ԴԱԿ, դասուղեկ, ծնող, ուսուցիչ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-

40.	Ձեռնարկել անհրաժեշտ միջոցների սովորողների, ինչպես նաև սովորողների և ուսուցիչների միջև բավարար համագործակցություն ապահովելու, ինչպես նաև միմյանց հետ հաղորդակցվելու համար դրական միջավայր ստեղծելու ուղղությամբ	Տնօրեն, փոխտնօրեն, ԴԱԿ, դասղեկներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-
41.	Յուրաքանչյուր սովորողի նկատմամբ ցուցաբերել անհատական մանկավարժական աջակցություն, ինչպես նաև հատուկ մանկավարժական միջոցառումներ կազմակերպել դժվարություններ ունեցող երեխաների հետ	Տնօրենություն, մ/մ նախագահներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-
42.	Ընդլայնել ինչպես դասարանների, այնպես էլ առանձին սովորողների ներդպրոցական և արտադպրոցական դաստիարակչական բնույթի միջոցառումներին մասնակցելու հնարավորությունները	Տնօրեն, փոխտնօրեն, ԴԱԿ, դասղեկներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-

43.	Համագործակցել իրավապահ մարմինների և ՀԿ-ների հետ:	Տնօրենություն	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	
44.	Կատարելագործել ծնողների հետ աշխատանքի ավանդական դարձած մեխանիզմները և պարբերաբար կազմակերպել ծնողական ժողովներ և անհատական գրույցներ	Տնօրենություն, դասղեկներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-
45.	Ոգևորել և խրախուսել դպրոցի կյանքին ակտիվ մասնակցություն ցուցաբերած ծնողների անհատական նախաձեռնությունները	Տնօրենություն, դասղեկներ	Ծրագրի իրականացման ընթացքում /2022-2027թթ/	-

## 8. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ, ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՆՎԱԶԵՑՄԱՆԸ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

- ✓ Պետական բյուջե
- ✓ Դպրոցի բյուջե
- ✓ Նվիրաբերություններ

### ՌԻՍԿԵՐԸ

- ✓ Նորամուծությունների մերժում
- ✓ Դպրոցի ֆինանսական սահմանափակ հնարավորություններ
- ✓ Ֆինանսական միջոցների կառավարման բարդացված գործընթաց
- ✓ Ծնողական համայնքի կողմից դպրոցի գործունեության մասնակցության պասիվություն

### ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Նորամուծությունների աստիճանաբար ներմուծում
- Ներդնել խրախուսանքի համակարգ
- Մշտապես ծանոթացնել ոլորտի նորություններին, քաջալերել նախաձեռնողներին
- Գտնել ֆինանսավորման այլ աղբյուրներ
- Սովորողների թվի ավելացում
- Դասարանների կոմպլեկտավորում ուսպլանով սահմանված թվաքանակով
- Ֆինանսների մուտքերի և դրանց փոփոխման կանխատեսում
- Եկամուտների համապատասխան ծախսերի ճիշտ պլանավորում
- Դպրոցի գործունեության թափանցիկություն անձնակազմի, ծնողական համայնքի, բարերարի համար

## 9. ԴՊՐՈՑԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՉՆԵՐԸ, ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի զարգացման ծրագրի գնահատումը ծրագրի գործողություններով պլանավորած և իրականացված արդյունքների համեմատման գործընթացն է: Որպես գնահատման գործիքներ պետք է ծառայեն յուրաքանչյուր գործողության առանձնահատկությունից բխող ցուցանիշները, որոնց միջոցով պետք է չափվեն ակնկալիքների կատարողականները, այլ կերպ ասած՝ դպրոցի զարգացման ծրագիրն իրականացնող ու վերահսկող շահառուների՝ դպրոցի կառավարման և խորհրդակցական մարմինների գործողությունների արդյունքներից բավարարվածության աստիճանը: Ցուցանիշները ամբողջացնում, ամփոփում են մեծ ծավալի վիճակագրական տվյալները և տալիս են իրավիճակի ընդհանուր պատկերը: Ցուցանիշները անհրաժեշտ են նաև ժամանակի ընթացքում դպրոցի գործունեության մեջ տեղի ունեցող փոփոխությունները, ուղղությունները բացահայտելու և գնահատելու համար:

«Հանրակրթության մասին» օրենքով նախատեսված է դպրոցի գործունեության գնահատման մեխանիզմը:

Ուսումնական հաստատության գործունեությանը տրվում է ներքին և արտաքին գնահատական:

Ներքին գնահատումը դպրոցի կողմից իր գործունեության վերլուծությունն է: Ներքին գնահատմանը մասնակից դարձնել վարչական և մանկավարժական աշխատողներին, սովորողներին և ծնողներին:

Ուսումնական հաստատության ներքին և արտաքին գնահատումն ուղղորդել սովորողին մատուցվող կրթական ծառայությունների որակի բարձրացմանը:

Դպրոցի զարգացման ծրագրի վերահսկողությունը իրականացնում է դպրոցի խորհուրդը՝ հանրակրթության ոլորտը կանոնակարգող օրենսդրության համաձայն: Ծրագրի իրականացման վերահսկողության ամենաարդյունավետ միջոցը 5-ամյա ծրագրի հիման վրա կազմված դպրոցի գործունեության տարեկան աշխատանքային պլանների կատարողականներն են:

## ***Պայրոցի զարգացման ծրագրի վերահսկողության արդյունավետ միջոցառումներ են.***

- դպրոցի խորհրդի կողմից առնվազն տարեկան մեկ անգամ դպրոցի տվյալ ուստարվա աշխատանքային ծրագրում ընդգրկված դպրոցի զարգացման ծրագրի դրույթների կատարողականների հաշվետվությունների քննարկումը և համապատասխան գնահատականների ամրագրումը,
- դպրոցի համայնքի և դպրոցի այլ շահառուների՝ դպրոցի զարգացման ծրագրի իրականացման աշխատանքներին կամ այդ շրջանակում կազմակերպված միջոցառումներին շարունակական ներգրավումը,
- դպրոցի խորհրդի մասնակցությունը տնօրենության կողմից դպրոցի զարգացման ծրագրի արդյունքների գնահատմանը,
- զարգացման ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից,
- յուրաքանչյուր տարվա ավարտին ծրագրի վերանայում՝ ըստ ներքին գնահատման արդյունքերի,
- յուրաքանչյուր ուստարվա սկզբին վերանայված ծրագրի հաստատում մանկավարժական և կառավարման խորհուրդների կողմից,
- խորհրդի կողմից տնօրենին խորհրդատվական և այլ աջակցության շարունակական տրամադրում:
- 

**Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար դպրոցը կունենա զարգացման ծրագրից բխող ուսումնադաստիարակչական աշխատանքների ծրագիր /գործողություններ, կատարողներ, ժամանակացույց/:**

**Որքան էլ ընդհանուր լինեն պահանջները, օրենքներն ու ծրագրերը, յուրաքանչյուր դպրոց ունի իր առանձնահատկությունները, և լավագույն որոշումներն ընդունողը պետք է լինի տնօրենը:**